ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՊՐԱՒՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ ՌՈՒՍԱՑ

«Наша-жизнь» թերթի հոկտեմբերի 25-ի համարում կարդում ենք։

Երեկ միայն հրատարակուեց սրբազան Սինոդի որոշումը, որով յանձնարարուում է թեմական առաջնորդներին՝ հրաւէր կարդալ հոգևորականութեան, որ ամեն միջոց և ազդեցութիւն գործ դնեն վերջ դնելու ազգաբնակութեան փոխադարձ կռուի և թշնամութեան։ Դատապարտելի յապաղումն։ Սրբազան Սինոդը մինչև հոկտեմբերի 22ը ժամանակ չըգտաւ կայացնելու իւր որոշումը այն վրդովեցուցիչ քարոզի դէմ, որ հրատարակուեց —«ինչ պէտք է անենք այս յուզուած ժամանակում» վերնագրով, որը կարդացուում էր Մոսկուայի եկեղեցիներում և որը տպուեց և տարածուեց Մոսկուայի թեմական իշխանութեան կարգադրութեամբ դեռ հոկտեմբերի 16-ից։ Նոյն իսկ Սինոդի վերոյիշեալ որոշումը ոչ թէ կայացել է ընդհանուր ժողովում, այլ միայն զեկուցմամբ, որը ստորագրելու համար մատն են ածել տնից տուն՝ անդամների մօտ։

Ամբողջ երկրում արիւն է թափուում, խաղաղ քաղաքացիների դէմ կատարուում են սոսկալի բռնութիւններ, իսկ մեր բարձր հոգևորականութիւնը միայն այժմ, երբ այդ բռնութիւնները կատարուած են, կարևոր է համարել հրաւիրել «ստորագրեալ» թեմական առաջնորդներին, որ սրանք էլ կոչ անեն իրենց «ստորագրեալ» քահանաներին՝ խաղաղութիւն քարոզելու նրանց երկպառակութեան դէմ. կարևոր է գտել անել այդ այն ժամանակ, երբ Սինոդին ստորագրեալ սրբազանները բռնութեան կրակի վրայ նաւթ լցրին և եկեղեցու բեմից քարոզում էին վրէժ և եղբայրասպան պատերազմ։ Հոգևորականութեան խաղաղացնող ձայնը իւր ժամանակին կարող էր խաւար ամբոխը զսպելու համար բաւական բան անել։ Սակայն ոչ թէ միայն Մոսկվայի թեմական իշխանութեան կողմից ցրուած խրատի մէջ կարելի է տեսնել՝ ինչպէս մեղմիւ նկատում է սրբազան Սինոդը, «կոչ ազգաբնակութեան ըստ քաղաքական համոզմունքների ինքնապաշտպանութեան դիմելու, որը միակողմանի մեկնութիւն տալիս կարող է առիթ լինել ազգաբնակութեան մէջ ներքին

կռիւ յառաջ բերելու», այլ և ուրիշ շատ թեմերում հրատարակուած նման «խրատների» և «կոչերի» մէջ։

Դեռ հոկտեմբերի 17-ի հրովարտակից մի քանի օր առաջ Սարատովում իւր պատերազմասիրութեամբ հռչակուած Գերմոգէն եպիսկոպոսը ցրւում էր կոչեր և քարոզում էր «պաշտպանել քաղաքական համոզմունքները», որ և արտայայտուեց նոյն Սարատովում սոսկալի աւերածութեան և բռնութեան մէջ։ Վերջին արիւնալից տրագէդիայի մէջ մեր հոգևորականութեան որոշ չափով մասնակցութիւն ունենալը արդէն ակներև է և ուշացած հրամանները բարձր հոգևոր իշխանութեան կողմից՝ խաղաղութիւն քարոզելու մասին, միայն հաստատում են նրա մեղսակցութիւնը այդ եղբայրասպան կռուի մէջ՝ երբէք չընպաստելով իսկական խաղաղացման գործին։ Նոյն Մոսկւայում մինչև վերջին օրերս տեղի ունի գազանացած ամբոխի կողմից վայրագ բռնութիւն ինտէլիգէնցիայի առանձին անհատների և մանաւանդ ուսանողների դէմ։ Մոսկուայի հոգևորականութեան մարդատեցութեան քարոզը՝—«մենք ի՞նչ պէտք է անենք» ի հարկէ տարածուեց գիւղեր և քաղաքներ՝ ամեն տեղ առաջ բերելով նման մարդատեցութեան ագիտացիա հոգևորականութեան կողմից։ Եւ կարելի է երկիւղ կրել, որ նա այժմ գործում է գիւղերում, իսկ Սինօդի որոշումը հոկտեմբերի 22-ից խաղաղացման մասին դեռ շուտ չի հասնիլ հոգևորականութեան ստորին խաւերին։ Սինօդն անսովոր եռանդով և արագութեամբ արձագանք էր տալիս ազատարար շարժումը ճնշելու գործում, ինչպէս այդ եղաւ բանւորներին եապօնական փողերով կաշառուած լինելու շրջաբերականի մէջ Պետերբուրգում յունվարի 9-ին տեղի ունեցած դէպքերից յետոյ, իսկ իւր որոշումները խաղաղութեան մասին նա գրում է շատ դանդաղ, զգոյշ, դիւանական բութ լեզուով, և այս սարսափելի օրերին նրա անդամները նոյն իսկ միասին ժողովուելու ժամանակ չեն գտնում։

Բաւական է, որքան մեր հոգևոր հաստատութիւնը դատապարտելի դեր խաղաց բռնութեան քաղաքականութիւն քարոզելու գործում կործանուած կազմակերպութիւնը պաշտպանելու դիտաւորութեամբ, բաւական է եկեղեցիների բեմից թշնամութեան և երկպառակութեան քարոզը, բաւական է ոստիկանութեան և աւերիչներին գործակցելը։ Նոր, երիտասարդ Ռուսաստանը օրհնութեամբ չի յիշիլ հոգևոր հովիւներին և ուսուցիչներին, նա նրանց կը կնքի բռնութիւն և թշնամութիւն սերմանողների անպատուաբեր անուամբ։

Մենք հրաւիրում ենք ընթերցողների ուշադրութիւնը Պե-

տերբուրգի 32 քահանաների կոչի վրայ։ Այդ կոչով նրանք հրաւէր են կարդում հոգևոր հովիւներին և քաղաքացիներին, որոնց խորթ չէ սիրոյ և խաղաղութեան պատգամը, հանդարտեցնել բորբոքուած կրքերը և վերջ դնել եղբայրասպանութեան։

Մենք խորապէս համակրում ենք այդ կոչին, որը քաղաքականութիւնից հեռու է։ Տարաբաղդաբար հոգևորականութեան միջից միայն առանձին անհատներ են հանդէս գալիս զուտ քրիստոնէական քարոզով. այն ինչ բարձր հոգևորականութեան բիւրոկրատիական հաստատութեան ստորադրեալ մեծամասնութիւնը՝ բառիս լայն իմաստով՝ մղում է քաղաքական ագիտացիան և այն ամենակոպիտ ձևով։

Մենք սկզբունքով հակառակ չենք, որ հոգևորականութիւնը մասնակցի քաղաքական կռուին, բայց մենք վճռականապէս դէմ ենք, որ այս կամ այն քաղաքական հայեացքների քարոզութեան և ագիտացիայի տեղը եկեղեցու բեմը լինի։ Թող հոգևորականութիւնը մտնի հասարակական ժողովարաններ, ներկայ լինի միտինգների, թող նա գրի և խօսի ինչ և ինչպէս էլ ուզում է. նա պատասխան կըստանայ, կը հերքուի քաղաքական այլ համոզմունքների հայեացքների տէր մարդկանց կողմից։ Բայց տաճարներում, բեմերից, որտեղ ընդդիմախօսել չի կարելի, որտեղ հոլովի իւրաքանչիւր խօսքը հաւատացողների աչքին առանձին նշանակութիւն է ստանում և մեկնւում բարձր հեղինակութեամբ, քաղաքական քարոզները և այն էլ «ինքնապաշտպանութեան» կոչով և համարեա բռնութեամբ պաշտպանելու քաղաքական համոզմունքը, երբէք տեղի չըպէտք է ունենան։

Բարձրագոյն ուկազով ռուսաց Սինոդի օրեր— պրոկուրորութեան պաշտօնից արձակուած է Պոբեդոնոսցևը, որը ամբողջ 25 տարի որոշ գոյն և ուղղութիւն էր տալիս պետական ներքին քաղաքականութեան։ Օդեսայում հոգևոր դպրանոցի աշակերտների ժողովում կտոր կտոր են արել Պոբեդոնոսցևի պատկերը։ Դպրանոցը փակուած է։

Կենտրբերիի արքեպիսկոպոսը Պետերբուրգի մետրոպոլիտին հեռագիր է ուղարկել հետևեալ իմաստով։—Անգլիական եկեղեցու կողմից խորին ցաւակցութիւն եմ յայտնում ռուսական եկեղեցուն այն մեծ դժուարութեանց առթիւ, որի մէջ գտնւում է երկիրը ազգային կեանքի բարեկարգութեան ոգէ-

ներում։ Նոյն ենք տածում ձեր քրիստոնէական ջանքերի վրայ և ապօթում, որ օրհնուին ձեր աշխատանքները՝ զսպելու ոգիտութեամբ և կրքով կուրացած մարդկանց կործանիչ գործունէութիւնները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԱՀԱՆԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Բոլոր դաւանութեանց եղբայրակից հովիւներին, որոնց համար բանկ են Քրիստոսի պատգամները մեր օրերի սոսկալի դեպքերի վերաբերութեամբ։

Եղբայրնե՛ր . . .

Ծանր, սոսկալի, հակաքրիստոնէական չարիք է կատարուում մեր շուրջը . . . Իւրաքանչիւր օր, իւրաքանչիւր ժամ մենք ստանում ենք մէկը միւսից սարսափելի տեղեկութիւններ՝ Հարաւում, Հիւսիսում և Արևելքում կատարուածների մասին . . .

Արիւնահեղ սարսափներից մարդուս արիւնը պաղում է երակների մէջ, սիրտը կսկծից կտոր-կտոր լինում։

Ի՞նչ կլինի, ինչով կը վերջանայ հրդեհը։ Երևակայութիւնն անզօր էր պատկերացնելու Տօմսկի հաղարաւոր դերեզմանների հնարաւորութիւնը։

Քրիստոնեայք այրում են հարիւրաւոր կանանց և նոյն իսկ երեխաներին . . . բայց ի՞նչ կարող է պատահել այսուհետև։ Գուցէ առուել սարսափելի մի բան, որից կը սոսկայ ամբողջ աշխարհը։

«Դատապարտուել նա, որի շրթունքները լուռ կը մնան այս օրերին»։ Ոչ ոք կսկծի ու սարսափի աղաղակով, բողոքով և պաղատանքով չի դիմադրել բռնութեան։

Լռելու ժամանակ չէ. պէտք է ամենքը, որոնց կրծքում բաբախում է սիրտը և գործում է գիտակցութիւնը, լարեն իրենց ոյժերը, որ կանգնեցնել կարողանան ամենակործան չարիքի հեղեղը։

Եղբարք, պրաւօսլաւ հովիւնե՛ր.

Ամենից առաջ դուք պէտք է բարձրացնէք ձեր հովուական ձայնը . . . Թափուում է մեր հաւատակից կամ հայրենակից եղբայրների արիւնը, որոնք մեզ պէս տրտմում և տանջուում են նրա տրտմութեամբ և տանջանքով։

Կոտորուում է մեր հօտը, կոտորում են քրիստոնեաներին, կամ որ աւելի վատ է, քրիստոնեայք դառնում են մարդասպաններ։